ների նախարարության 2011 թվականի ապրիլի 5-ի N 3/3.8-1/77165-11 ու Հայաստանի
Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011
թվականի ապրիլի 5-ի N ԱԱ/3-4/1971-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաս-
տանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված հաշվով իրականացվող գործարքն
անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգոր-
ծական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 14-ի «Տուբեր-
կուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդ-
լայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-361-Ա որոշմամբ հաս-
տատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Տոյոտա Երևան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01557589) 2011 թվականի մարտի 22-ին
կնքված՝ հաշվում նշված գործարքը, որով նախատեսվում է «Toyota Corola 1.4 GAS» մակնիշի
ավտոմեքենայի ձեռքբերում՝ 7200000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաս-
տանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ապրիլի 2011 թվականի Մ-258-ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԱՐԱՔԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի 11-ի N 3/3.8-1/77356-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի ապրիլի 8-ի N ԱԱ/3-4/2083-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է:

1. Սահմանել, որ «Արաքկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաքկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն:

«Հանրոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04716703) 2011 թվականի ապրիլի 4-ին կնքված՝ N 07 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Արաքկիր» ԲՀ-ԵԴՍԻ Արտաշատի վերականգնողական կենտրոնի համար կահույքի պատրաստում՝ 2716977 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
22 ապրիլի 2011 թվականի N Մ- 259 -Ա
քաղ. Երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱՂԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի 14-ի N 3/3.8-1/77335-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի ապրիլի 8-ի N ԱԱ/3-4/2078-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է.

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բազալտ Էմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09811321) 2011 թվականի մարտի 21-ին կնքված N 04 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նոր մասնաշենքի երեսպատման աշխատանքների իրականացում՝ 8563700 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ապրիլի 2011 թվականի N Մ- 260 -Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱՂԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ) (N 2)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի 5-ի N 3/3.8-1/77157-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի ապրիլի 5-ի N ԱԱ/3-41968 -11 եզրակացությունները, **ո թ ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Եվրոստան-Ույուտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01537756) 2011 թվականի մարտի 15-ին կնքված N 09 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նոր մասնաշենքի համար հավելվածներում նշված պատրաստվածքների պատրաստում և տեղադրում՝ 23499717 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
22 ապրիլի 2011 թվականի N Մ- 262 -Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ) (N 1)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի 1-ի N 3/3.8-1/77032-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 31-ի N ԱԱ/3-4/1870-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է.

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

Ռուսաստանի Դաշնության «Սոյուզլիֆտմոնտաժ» ՓԲԸ-ի «Յուզլիֆտ» դուստր ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00009839) 2011 թվականի մարտի 15-ին կնքված N 08/Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նոր մասնաշենքի վերելակների մոնտաժում և փորձարկում՝ 11000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

22 ապրիլի 2011 թվականի N Մ-262-Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 3-Ի N Մ-228-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱ-
ԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցու-
թյուն» դրամաշնորհային ծրագիր)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջա-
պահության նախարարության 2011 թվականի մարտի 24-ի N ՍԲ/2269-11 գրությունը և
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի 1-ի
N 3/3.8-1/77031-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտեի 2010 թվականի մարտի 31-ի N ԱԱ/3-4/1871-11 եզրակացություն-
ները, որոշում է.

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարու-
թյան և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի
միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմի-
ջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հան-
րապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամա-
շնորհային ծրագրի մասին» N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման
հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ի (ՀՎՀՀ՝ 00063418) և «Մեդիտեք»
ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01222077) 2011 թվականի հունվարի 24-ին կնքված Պետության կարիք-
ների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման գնման N ԱՊՁԲ-10/87 պայմա-
նագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մանրէաբանական լաբորատորիայի հա-
մալիր սարքավորումների ձեռքբերում՝ 38430000 դրամի չափով՝ առանց ավելացված արժե-
քի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաս-
տանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
22 ապրիլի 2011 թվականի N Մ-263Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N Մ-361-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-
ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց
սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2011 թվականի ապրիլի 1-ի N3/3.8-2/77027-11, Հայաստանի Հան-
րապետության առողջապահության նախարարության 2011 թվականի ապրիլի 4-ի N ՀԲ/22/
2578-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 30-ի N 3/3-6/1808-11 եզրակացությունները,
որոշում է:

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաս-
տանյան մասնաճյուղի հասցեով Ֆրանսիայից ստացված բեռը (պարամամինոսալիցիլինա-
յին թթու (PAS), 4 գ և իզոթերմալ արկղ՝ 5 տեղ, 481 կգ ընդհանուր քաշով, 52757.37 եվրո
արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 1847.33 եվրո, «Չվարթնոց» Մ/Տ) ներմուծվում
է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 14-ի «Տուբերկուլոզի և դեղորայքա-
կայուն տուբերկուլոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի
Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-361-Ա որոշմամբ հաստատված ծրագրի
շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների
կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ


Ո Ր Ո Շ ՈՒ Մ
22 ապրիլի 2011 թվականի N Մ-264 -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱՂԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի 4-ի N 3/3.8-2/77100-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 31-ի N ԱԱ/3-6/1886-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է:

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից «Էլֆնետ Գրուպ Ս. Ռ. Օ.» ընկերությունից ձեռք բերված տեսահսկման պաշտպանիչ համակարգի ապրանքները (112 կգ ընդհանուր քաշով, 26968 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմել են 820 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ապրիլի 2011 թվականի N Մ-265-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի
ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի 7-ի N 3/3.8-2/77213-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի ապրիլի 13-ի N 03/07-1/3614-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի ապրիլի 13-ի N ԱԱ/3-6/2200-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել «Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի կողմից հատկացված գումարներով գնված Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի հասցեով Ռուսաստանից ստացված բեռի (ուսումնական ցուցադրական հավաքածուներ՝ 6 տեղ, 625 կգ ընդհանուր քաշով, 1856769 ռուբլի ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» Մ/Տ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԿԱԿ

Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ



**22 ապրիլի 2011 թվականի N Մ-266-Ա
քաղ. երևան**

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒ
ԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի 8-ի N 3/3.8-2/77304-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի ապրիլի 8-ի N ԱԱ/3-6/2088-11 եզրակացությունները **ո թ ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել անհատ բարերար Սեյրան Կարապետյանի կողմից Արաբական էմիրություններից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության հասցեով ուղարկված աղբատար մեքենայի («HYUNDAI HD65» մակնիշի, նույնականացման համարը՝ UDAAHSZAAVT3E282, 1 տոն, 2430 կգ ընդհանուր քաշով, 43000 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 3000 ԱՄՆ-ի դոլար, ԱՄ ՄՁՄ ՄՏ) ներմուծման ծրագիրը: Աղբատար մեքենան նախատեսված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի «Սանմաքրոմ-կանաչապատում» ՀՈԱԿ-ի համար:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:


ՆԱԽԱԳԱՀ 

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ Մ Ա Մ
22 ապրիլի 2011 թվականի N Մ - 267 - Ա
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-885-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի 12-ի N 3/3.8-177434/11 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի ապրիլի 8-ի N ԱԱ/3-4/2079-11 եզրակացությունները, **ո թ ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Հայկական Կարմիր Խաչի ընկերության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Պարոնյանի 21, ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 10-ի «Հայկական Կարմիր Խաչի ընկերության կողմից իրականացվող «Պետության կարիքների համար տուբերկույրզով հիվանդների սոցիալական աջակցության ծառայություններ» ծրագրի մասին» N Մ-885-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝


1) «Մանասե Ծառուկյան» ԱԶ-ի հետ (ՀՎՀՀ՝ 22602005) 2011 թվականի մարտի 18-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում մինչև սույն թվականի սեպտեմբերի 10-ը նշված ապրանքների մատակարարում՝ 16719220 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Արտավազդ Ամրոյան» ԱԶ-ի հետ (ՀՎՀՀ՝ 35052448) 2011 թվականի մարտի 18-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում մինչև սույն թվականի

սեպտեմբերի 10-ը նշված ապրանքների մատակարարում՝ 20852600 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Ան-ՋՈՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09210313) 2011 թվականի մարտի 31-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում մինչև սույն թվականի մայիսի 31-ը տպագրական ծառայությունների մատուցում՝ 2669880 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

✓

5/6.15

(Container No CAXU 6352506)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
 ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ապրիլի 2011 թվականի Մ- 268 -Ա

քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
 ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ
 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի Ն Մ-896-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
 ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՈՒ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՏԻՐԱՄԱՅՐ
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ») ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի 4-ի N 3/3.8-2/77099-11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի ապրիլի 8-ի N ՖԲ/ԱնՄ-5/2844-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի ապրիլի 1-ի N ԱԱ/3-6/1906-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ Ամերիկայի միացյալ հայկական հիմնադրամի կողմից «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության հասցեով ուղարկված բեռը (234 տեղ, 4820 կգ ընդհանուր քաշով, 72550 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 5700 ԱՄՆ-ի դոլար, բեռի բաշխման ցանկը կցվում է, Շիրակի ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 25-ի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Աջակցություն անապահով ընտանիքներին» ծրագրի մասին» (2011 թվականի հունվարի 21-ի N Մ-007-Ա որոշման խմբագրությամբ) N Մ-896-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հ/Հ	Ստացող կազմակերպություն	Քանակ (արկղ, կգ, հատ, գույգ)	Արկղի պարունակություն	Ապրանքի անվանում	Միավորի արժեք \$	Ընդհանուր արժեք \$
1	Տիրամայր Հայաստանի ճամբար- Ծաղկաձոր և պետական ճամբարներ (մոտ 4000 շահառու)	164	10 արկղ (120 գույգ) 4 արկղ (40 հատ) 8 արկղ (64 հատ) 50 արկղ (1300 հատ) 53 արկղ (1325 հատ) 18 արկղ (540 հատ) 21 արկղ (1470 հատ)	կոշիկ խաղալիք բաճկոն տաբատ սվիտեր կիսաշքազգեստ մայկա	20 3.75 46.9 12.9 12.7 9.1 3.7	2400 150 3001 16833 16827 4930 5490
2	Տիրամայր Հայաստանի Կենտրոն (մոտ 70 շահառու)	20	5 արկղ (40 հատ) 5 արկղ (130 հատ) 5 արկղ (125 հատ) 5 արկղ (150 հատ)	բաճկոն տաբատ սվիտեր կիսաշքազգեստ	46.9 12.9 12.7 9.1	1876 1683 1587 1370
3	Տաշիրի Տիրամայր Հայաստանի Գթության Քույրեր (մոտ 470 շահառու)	25	10 արկղ (350 հատ) 15 արկղ (120 հատ)	մանկական հագուստ բաճկոն	8.8 46.9	3100 5628
4	Կարիքավոր ընտանիքներ (մոտ 650 շահառու)	25	10 արկղ (350 հատ) 5 արկղ (130 հատ) 5 արկղ (125 հատ) 5 արկղ (350 հատ)	մանկական հագուստ տաբատ սվիտեր մայկա	8.8 12.9 12.7 3.7	3100 1683 1587 1305

Այս բեռի ընդհանուր քաշն է 4,820 (չորս հազար ութ հարյուր քսան) կգ, \$72,550.00 (յոթանասուներկու հազար հինգ հարյուր հիսուն ԱՄՆ դոլար) արժողությամբ. ճանապարհածախսը կազմում է \$5,700.00 (հինգ հազար յոթ հարյուր ԱՄՆ դոլար):





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ապրիլի 2011 թվականի N Մ-269-Ա
քաղ. երևան


ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՐԻ ՀԱՍՑԵՈՎ
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի 12-ի N 3/3.8-2/77437-11, Հայաստանի Հանրապետության աշխարհային և սոցիալական հարցվերի նախարարության 2011 թվականի ապրիլի 1-ի N ՖԲ/ԱնՄ-5/2622-11, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 30-ի N ԱԱ/3-6/1858-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Ամերիկայի միացյալ հայկական ֆոնդի կողմից Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի հասցեով ուղարկված կանացի և տղամարդու սպորտային կոշիկների (40 տեղ, 8885 կգ ընդհանուր քաշով, 254235.96 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 8125 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, Արարատյան S/Ս) ներմուծման և բախշման ծրագիրը:

2. Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղին՝ րեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն բաշխման վերաբերյալ:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարու-թյուն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտ-ների կոմիտե, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու, Սյունիքի ու Շիրակի մարզպետներին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

MBDU 8624351 բեռնարկը

ԿԱՆԱՑԻ ԵՎ ՏՂԱՍՏԱՐԳՈՒ ՄՊՈՐՏԱՅԻՆ ԿՈՇԻԿՆԵՐԻ

5/6.3

ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿ

#	ՍՏԱՑՈՂ	ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐ	ՔԱՆԱԿ	ԳՈՒՄԱՐԸ
1	ՀՕՖ-ի Երեխաների աջակցության կենտրոնի շահառուներ	զույգ	100	\$ 3,944.09
2	ՀՕՖ-ի բարեգործական ճաշարանների շահառուներ	զույգ	2,000	\$ 78,881.78
3	ՀՕՖ-ի Վանաձորի Ծերանոցի շահառուներ	զույգ	70	\$ 2,760.86
4	ՀՕՖ-ի կրթական ծրագրերի շահառուներ	զույգ	200	\$ 7,888.18
5	Պատերազմի, աշխատանքի և զինված ուժերի վետերանների միություն	զույգ	250	\$ 9,860.22
6	Վազգեն Ա անվան կրթահամալիր	զույգ	200	\$ 7,888.18
7	Վանաձորի Ա. Մաթևոսյանի անվան թիվ 8 դպրոց	զույգ	160	\$ 6,310.54
8	Գյումրու Շիշյանի անվան Օկտեռ երաժշտական դպրոց	զույգ	260	\$ 10,254.63
9	Գյումրու Օունջյան միջնակարգ դպրոց վարժարան	զույգ	250	\$ 9,860.22
10	Տիրամայր Հայաստանի կուսաստան	զույգ	100	\$ 3,944.09
11	Փոքր Մեծ կրթահամալիր	զույգ	150	\$ 5,916.13
12	Սյունիք Բարեգործական ՀԿ	զույգ	100	\$ 3,944.09
13	Երևանի Ջատիկ մանկատուն	զույգ	30	\$ 1,183.23
14	Գավառի մանկատուն	զույգ	75	\$ 2,958.07
15	Վանաձորի մանկատուն	զույգ	75	\$ 2,958.07
16	Նոր Խարբերդի մանկատուն	զույգ	150	\$ 5,916.13

5/6.3 ✓


17	Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N11 հատուկ (օժանդակ) դպրոց	գույգ	60	\$ 2,366.45
18	Երևանի N12 հատուկ (օժանդակ) դպրոց	գույգ	60	\$ 2,366.45
19	Գավառի թիվ 1 հատուկ դպրոց	գույգ	80	\$ 3,155.27
20	Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 2 հատուկ դպրոց	գույգ	80	\$ 3,155.27
21	Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր	գույգ	80	\$ 3,155.27
22	Երևանի N18 հատուկ դպրոց	գույգ	80	\$ 3,155.27
23	Երևանի տեսողության խանգարումներ ունեցող երեխաների N14 հատուկ դպրոց	գույգ	80	\$ 3,155.27
24	Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների N17 հատուկ դպրոց	գույգ	80	\$ 3,155.27
25	Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 6 հատուկ դպրոց	գույգ	84	\$ 3,313.03
26	Հանրապետական N 1 հատուկ կրթահամալիր	գույգ	80	\$ 3,155.27
27	Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիր	գույգ	80	\$ 3,155.27
28	Արմավիրի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 1 հատուկ դպրոց	գույգ	70	\$ 2,760.86
29	Վաղարշապատի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 2 հատուկ դպրոց	գույգ	70	\$ 2,760.86
30	Վանաձորի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N1 հատուկ դպրոց	գույգ	70	\$ 2,760.86
31	Աբովյանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 1 հատուկ դպրոց	գույգ	60	\$ 2,366.45
32	Միսիհանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 1 հատուկ դպրոց	գույգ	60	\$ 2,366.45
33	Գորիսի N 1 հատուկ դպրոց	գույգ	60	\$ 2,366.45
34	Գյումրու հատուկ դպրոց	գույգ	60	\$ 2,366.45
35	Արթիկի N 1 հատուկ դպրոց	գույգ	60	\$ 2,366.45

5/6.3 ✓

36	Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ դպրոց	գույգ	70	\$ 2,760.86
37	Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ դպրոց	գույգ	70	\$ 2,760.86
38	Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն	գույգ	70	\$ 2,760.86
39	Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ դպրոց	գույգ	72	\$ 2,839.74
40	Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն	գույգ	80	\$ 3,155.27
41	Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն	գույգ	60	\$ 2,366.45
42	Կապանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն	գույգ	60	\$ 2,366.45
43	Գյումրու Ֆ. Նանսենի անվան խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն	գույգ	60	\$ 2,366.45
44	Վարդենիսի Նյարդահոգեբանական Տուն Ինտերնատ ՊՈԱԿ-ի շահառուներ	գույգ	200	\$ 7,888.18
45	Երևանի թիվ 1 Տուն Ինտերնատ ՊՈԱԿ-ի շահառուներ	գույգ	60	\$ 2,366.45
46	Նորքի տուն ինտերնատ	գույգ	60	\$ 2,366.45
47	Գյումրիի տուն ինտերնատ	գույգ	60	\$ 2,366.45
ԸՆԴԱՄԵՆԸ			6,446	\$ 254,235.98

ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն՝ Բ. Սարգսյան

Handwritten signature





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
22 ապրիլի 2011 թվականի N Մ - 270 - Ա
քաղ. երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑ-
ՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԱՆԿԱԲԱՐՁԱ-
ԳԻՆԵԿՈՒՈՒԳԻՎԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԸՆԴՈՒՆԱՐԱՆԻ ԵՎ
ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆԴԱԿԻ ՀԻՄՆԱՆՈՐՈՎՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի 13-ի N 3/3.8-1/77491-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի ապրիլի 14-ի N 01/2195-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի ապրիլի 18-ի N ՀՔ/22/3065-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի ապրիլի 14-ի N ԱԱ/3-4/2210-11 և Հայաստանի Հանրապետության Կոլապի մարզպետի 2011 թվականի ապրիլի 13-ի N 01/14.2/1170-11 եզրակացությունները, **ո Ր Ո - 2 ու մ է.**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 12991865 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի բժշկական կենտրոնի մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքի ընդունարանի և աստիճանավանդակի հիմնանորոգում» ծրագիրը (կցվում է):


2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ատիկա Շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01237598) 2011 թվականի մարտի 28-ին կնքված N ՀՀ/ՉԲԿ-01/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է

հիմնանորոգման աշխատանքների իրականացում՝ 12991865 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3 «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
22 ապրիլի 2011 թվականի N Մ - 271 - Ա
քաղ. երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑ-
ՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ՕՇԱԿԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈՎՄԱՆ
ՆԱԽԱԳԾՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի 1-ի N 3/3.8-1/77028-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի ապրիլի 1-ի N 01/1928-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի ապրիլի 1-ի N 03/07-1/3045-11, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի ապրիլի 3-ի N ԱԱ/3-4/1876-11 ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2011 թվականի մարտի 29-ի N 01/08/830-11 եզրակացությունները, **ո թ ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 5140000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական գյուղի միջնակարգ դպրոցի մասնակի վերանորոգման նախագծում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00007335) 2011 թվականի մարտի 16-ին կնքված N ՀՀ/ՆՆ-04/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տեխնիկական վիճակի ուսումնասիրություն և հետազոտական աշխատանքների իրականացում՝ 240000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.


2) «ՀԳՇՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00005417) 2011 թվականի մարտի 3-ին կնքված N ՀՀ/ՆՆ-03/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակում՝ 4500000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Հայաստան» համահայկական
 բարեգործական կազմակերպության գործադիր տնօրեն



[Signature]
 Վահագն Վարդանյան
 «24» մարտի 2011թ.

« ՀՀ Արագածոտնի մարզի Օշական գյուղի միջնակարգ դպրոցի մասնակի վերանորոգման նախագծում » ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Բարելավել ՀՀ Արագածոտնի մարզի Օշական գյուղի միջնակարգ դպրոցի աշակերտա-ուսուցչական կազմի աշխատանքի պայմանները
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը	ՀՀ Արագածոտնի մարզի Օշական գյուղ, կրթության բնագավառ
5.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 5.140.000,00 դրամ:
6.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Արագածոտնի մարզի Օշական գյուղի միջնակարգ դպրոցը
7.	Ծրագրի իրականացման տեղությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2011թ մարտի 03-ից մինչև 2011թ. օգոստոսի 03-ը:

5/2

8.	Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում
9.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը	«Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ» ԲԲԸ-ի կողմից 1-ին և 2-րդ մասնաշենքերի տեխնիկական վիճակի ուսումնասիրություն և հետազոտական աշխատանքներ՝ 240.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: «ՀԳՇՆ» ՍՊԸ-ի կողմից 1-ին և 2-րդ մասնաշենքերի հիմնանորոգման և 4-րդ մասնաշենքի ջեռուցման նախագծում՝ 4.500.000,00 ԱԱՀ-ի: Նախատեսվում է նաեւ նախագծի փորձաքննություն՝ 400.000,00 դրամ մոտավոր արժեքով:
10.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
11.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Արագածոտնի մարզպետարանի հետ
12.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝
 Արմինա Դարբինյանը

5/2



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
22 ապրիլի 2011 թվականի **Մ Մ - 272** - Ա
քաղ. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԱՅԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 129 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԴԱՀԼԻՃԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ», ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի 23-ի N 3/3.8-1/3067-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի մարտի 25-ի N 01/1719-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի մարտի 25-ի N 03/07-1/2759-11, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի ապրիլի 5-ի N ԱԱ/3-4/1970-11 ու Երևանի քաղաքապետի 2011 թվականի մարտի 31-ի N 02/12-7009Հ-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**


1. Բարեգործական որակելի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 5501250 դրամ ընդհանուր արժողությամբ «Երևան քաղաքի Գայի անվան թիվ 129 միջնակարգ դպրոցի դահլիճի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀՍՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2011 թվականի մարտի 18-ին կնքված N ՀՀ-Կ-08/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կահույքի պատրաստում և տեղադրում՝ 5501250 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:


3 «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Երևանի քաղաքապետին:



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան




22 մարտի 2011թ.

« ՀՀ Երևան քաղաքի Գայի անվան թիվ 129 միջնակարգ դպրոցի դահլիճի կահավորում »

ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ապահովել Երևան քաղաքի Գայի անվան թիվ 129 միջնակարգ դպրոցի դահլիճը անհրաժեշտ կահույքով
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Երևան քաղաք, կրթության բնագավառ
5.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 5.501.250,00 ՀՀ դրամ:

5/1



6.	Բարեգործություն ծախսողը	ՀՀ Երևան քաղաքի Գայի անվան թիվ 129 միջնակարգ դպրոցը
7.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2011թ մարտի 18-ից մինչև 2011թ. օգոստոսի 18-ը
8.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում
9.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՀԱՍՍ» ՍՊԸ-ի կողմից 150 դահլիճի նստարանների պատրաստում, գնում է անհատույց հանձնում՝ 5.501.250,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:
10.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
11.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ՀՀ Գիտության և կրթության նախարարության հետ:
12.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդակցան՝

Արմինա Դարբինյանը

5/1



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
22 ապրիլի 2011 թվականի N Ա-273
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Ա-096-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («Հովարդ Կարապյոզյան») բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի 14-ի N3/3.8-2/77564-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի ապրիլի 13-ի N ՀՔ/22/2925-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 30-ի N ԱԱ/3-6/2201-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**


1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հովարդ Կարապյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Պարբերական հիվանդությանը երեխաների բուժման (անվճար դեղորայքով մշտական ապահովում)» բարեգործական ծրագրի մասին» N Ա-096-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

- 1) որոշման 1-ին կետում «20908000 դրամ» բառերը փոխարինել «42240 եվրոյին համարժեք դրամ» բառերով.
- 2) որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):
2. Սահմանել, որ Ֆրանսիայից «Հովարդ Կարապյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռը («Կոլիսիցին» դեղորայք՝ 5 տեղ, 422 կգ ընդհանուր քաշով, 42240 եվրոյին համարժեք դրամ արժեքով, ներառյալ փոխադրման ծախսերը, «Եվրոթոնգ» Ս/Տ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:
3. Սույն որոշման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ - ՄԻՄՈՆՅԱՆ



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հովարդ Կարապյոզյան» ԲԲԳԿ
Կամո Տեր-Պետրոսյանի կողմից
«14» ապրիլի 2011թ.

«ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱՊՅՈՅՅԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՎԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՏ 2011թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՊԱՐԵՐԵԼՎԱԿԱՆ ԳԻՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՒԱՆՆԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ (ԱՆՎՃԱՐ ԴԵՂՈՐԱՅՔՈՎ ՄԵՏԱԿԱՆ ԱՄԱՅՈՎՄԱՆ)» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Պարբերական հիվանդությանը տառապող երեխաների մշտական դեղորայքով ապահովումը երիկաների վաղահաս ամիլոիդոզ-երիկամային անբավարարությունը և հաշմանդամությունը կանխելու համար:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, օգտվել հարկային արտոնություններից
3	Բարեգործը	Հովարդ Կարապյոզյան ֆիլանթրոպիայի (ԱՄՆ – Նյու-Յորք)
4	Ծրագիրը կատարողը	«Հովարդ Կարապյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն՝ իրավաբանական հասցեն - ք. Երևան, Նորթ Լյոյդեր-180, հարկ վճարողի հաշվառման համարը՝ ԶՎԳ-01533153, «Լյուսվիր» բժշկական համալիր, ԳՅ առողջապահության նախարարության Պարբերական հիվանդության մամուլական հանրապետական կենտրոն:


5/6.11

C

5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրն իրականացվելու է ԶԶ բոլոր մարզերում, Երևան քաղաքում, ԼՂՀ-ում, հիմնական հետազոտությունները, բժշկական հսկողությունը և դեղորայքի բաշխումը կատարվելու է «Արաբկիր» բժշկական համալիրի Պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոնի մասնագետների կողմից:
6	Ծրագրի բյուջեն	Ծրագիրը ֆինանսավորվում է ամերիկյան Զոլարդ Կարագյոզյան հիշատակի ընկերակցության կողմից, որի ընդհանուր արժեքն է 42.240 եվրոյին համարժեք դրամ: դեղորայք - «կոլխիցին» 1 մգ - 440.000 հաբ՝ 42.240 եվրոյին համարժեք դրամ (ներառյալ տրանսպորտային ծախսերը) (Ձեռք է բերվելու Ֆրանսիայում)
7	Բարեգործություն ստացողը	Շահառուներն են ԶԶ բոլոր մարզերի, ԼՂՀ-ի և Զավախքի պարբերական հիվանդությամբ հիվանդ՝ կենտրոնում հաշվառված և 2011թ. ընթացքում նոր հայտնաբերվող, 0-18 տարեկան երեխաները:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը շարունակական է: Աշխատանքի նշված ծավալներն ու ծախսերը նախատեսված են 2011թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ժամկետի համար:
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2011թ. ծրագրով նախատեսվում է պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոնում հաշվառված 1887 և նոր հայտնաբերված մոտ 300 0-18 տարեկան հիվանդների ընթացիկ հսկողություն և բուժում (անվճար մշտական դեղորայքի բաշխում) ամբողջ տարվա ընթացքում:
10	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Զոլարդ Կարագյոզյան» ԲԲԿ Ֆրանսիայից գնելու է 440.000 հաբ «կոլխիցին» 1մգ դեղորայքը, Փարիզ-Երևան օդանավով տեղափոխելու է Երևան և հանձնելու պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոնին՝ հիվանդներին անվճար բաշխելու համար: 42.240 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ 440.000 հաբ «կոլխիցին» 1մգ դեղորայքի ներմուծում՝ որպես հումանիտար բեռ:

5/6.17 ✓

11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Տրանսպորտային ծախսեր՝ ընդհանուր գումարի 3%-ի չափով:
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագիրը համաձայնեցված է ԶԶ և ԼՂՀ առողջապահության նախարարությունների, «Արաբկիր» բժշկական համալիրի և Պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոնի տնօրինությունների հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ԶԶ և ԼՂՀ առողջապահության նախարարություններ, ԶԶ մարզպետարանների առողջապահության վարչություններ, պարբերական հիվանդությամբ հիվանդ երեխաների ծնողներ, «Զոլարդ Կարագյոզյան» ԲԲԿ և «Արաբկիր» բժշկական համալիրի տնօրինություններ:



5/6.17 ✓



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ապրիլի 2011 թվականի N 274-Ա
քաղ. Երևան

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԿՐՏԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ
ԵԿԵՂԵՑՈՒ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի 16-ի N 3/3.8-2/2516-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի մարտի 16-ի N 01/1521-11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի մարտի 17-ի N ՖԲ/ԱՆՄ-5/2031-11 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 21-ի N ԱԱ/ 3-4/1617-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**


1. Բարեգործական որակել Երևանի հայ ավետարանական մկրտական քրիստոնյաների եկեղեցու կողմից իրականացվող՝ 4.000.000 դրամ արժողությամբ «Մանուկների հումանիտար օգնություն» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկայի մկրտական առաքելություն ընկերակցության կողմից Հայ ավետարանական մկրտական քրիստոնյաների եկեղեցու հասցեով ստացված հումանիտար բեռը՝ նվերներ երեխաներին (վերմակներ, կոշիկներ, գրենական պիտույքներ և հիգիենայի պարագաներ՝ 207 տեղ, 6738.93 կգ ընդհանուր քաշով, 5.821.1 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1455 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» Տ/Մ և 81 տեղ, 2522.17 կգ ընդհանուր քաշով, 2.178.9 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 545 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» Տ/Մ) ներմուծվում են 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Երևանի հայ ավետարանական մկրտական քրիստոնյաների եկեղեցուն՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի

համակարգման հանձնաժողով ներկայացնել դրանց օգտագործման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե, ԼՂՀ և ՀՀ Արարատի, Արագածոտնի, Տավուշի, Գեղարքունիքի, Կոտայքի, Ծիրակի, Վայոց ձորի, Սյունիքի, Լոռու մարզպետներին:




Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

նկատմամբ վերահսկողության
մեխանիզմների նկարագրությունը:

հսկողությունը իրականացնելու նպատակով ստեղծել կառավարական, համայնքային ինչպես նաև եկեղեցական կենտրոնական և տեղական ներկաընթացիչներից կազմված հանձնաժողով, որը ծրագրի ողջ ընթացքի ժամանակ կկատարի հսկողի դեր միջոցառումների կազմակերպման գործընթացի և նվերների բաշխման համար:

Հանձնաժողովի կազմը՝

- ՀՀ կառավարության բարեգործական ծրագրեր համակարգման հանձնաժողովից 1 հոգի:
- Յուրաքանչյուր մարզպետարանից 1 հոգի:
- Յուրաքանչյուր քաղաքպետարանից 1 հոգի:
- ՀԱՄԶ եկեղեցու ժառայողներից առանձին համայնքներում 1 հոգի:
- ԵՀԱՄԶ եկեղեցու հոգաբարձությունից 1 հոգի:
- Հանձնաժողովների կողմից կատարված դիտարկումից հաշվետվությունները և ակտերը ներկաընթացել ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով:



ՁԻ. 5/5



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ


Ո Ր Ո Շ ՈՒ Մ
22 ապրիլի 2011 թվականի N Մ-275-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի 18-ի N 3/3.8-2/77686-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի ապրիլի 14-ի N ԱԱ/3-6/2217-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է:

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից «Կոնե Էլեվատորս» ընկերությունից ձեռք բերված վերելակները (2 հատ, PW 08/10-09(5/5) MonoSpace Special A տիպի, 24 տեղ, 8652.09 կգ ընդհանուր քաշով, 57800 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմել են 5500 եվրո, ՄՃՓ մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Մ Ա Մ


22 ապրիլի 2011 թվականի N Մ-276 -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆ»
ՀԻՄՆԱՊՐԱՄ) (N 1)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի 18-ի N 3/3.8-2/77685-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի ապրիլի 14-ի N ԱԱ/3-6/2218/-11 եզրակացությունները, **ո թ ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից «Կոնե Էլեվատորս» ընկերությունից ձեռք բերված վերելակը (GW 25/10-19(5/5) MonoSpace Transys A տիպի, 23 տեղ, 12408.22 կգ ընդհանուր քաշով, 54700 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմել են 2750 եվրո, ՄՃՓ մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ



Ո Ր Ո Շ ՈՒ Մ
22 ապրիլի 2011 թվականի N Մ-
քաղ. Երևան 277 -ւ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-109-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի 19-ի N 3/3.8-1/77729-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի ապրիլի 18-ի N ԱԱ/3-4/2302-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Մատենադարան» հիմնադրամ)» N Մ-109-Ա որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետում «6562500 դրամի չափով» բառերը փոխարինել «6855000 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**22 ապրիլի 2011 թվականի N Մ 278 - Ա
քաղ. Երևան**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ-442-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի 15-ի N 3/3.8-2/77608-11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի ապրիլի 14-ի N ՖԲ/ԱՆՄ-5/3007-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի ապրիլի 14-ի N ԱԱ/3-6/2216-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ Միացյալ հայկական հիմնադրամի կողմից Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի հասցեով ուղարկված բեռը (40 տեղ, 8287 կգ ընդհանուր քաշով, 272798.8 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ, որից բեռնափոխադրման ծախսերը կազմում են 8125 ԱՄՆ-ի դոլար, Արարատյան Տ/Մ) ներմուծվում է «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ պայմաններ» N Մ-442-Ա որոշմամբ (2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-280-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արարատի, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Հայաստանի Հանրապետության Կոտայքի, Հայաստանի Հանրապետության Սյունիքի, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի, Հայաստանի Հանրապետության Շիրակի, Հայաստանի Հանրապետության Լոռու, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետներին և Երևանի քաղաքապետին:


ՆԱԽԱԳԱՀ


Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ապրիլի 2011 թվականի N Մ - 279 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ-442-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ


(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի 8-ի N 3/3.8-1/77300-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի ապրիլի 11-ի N ԱԱ/3-4/2120-11 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ պայմաններ» ծրագրի մասին» N Մ-442-Ա (2011 թվականի ապրիլի 30-ի N Մ-280-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մեծ անիվ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01224192) 2011 թվականի մարտի 28-ի պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ապրանքների ձեռքբերում՝ 1500000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
22 ապրիլի 2011 թվականի N Մ - 280 - Ա
քաղ. երևան

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ԻՆՖԵԿՏԻՈՆ ՀԱՎԱՏՈՒԲԵՐԿՈՒՅՈՒՅՈՒՄԻ ԿՈՒՆԵՐՎՈՒՄ» ՓԲԸ-Ի ՄԱՍՆԱԿԻ ԿԱՀՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի 21-ի N 3/3.8-1/77846-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի ապրիլի 20-ի N 01/2308-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի ապրիլի 20-ի N ՀՔ/22/3167-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի ապրիլի 18-ի N ԱԱ/3-4/2304-11 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի ապրիլի 21-ի N 01/1815-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 1309200 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու ինֆեկցիոն հակատուբերկոլյուզային հիվանդանոց» ՓԲԸ-ի մասնակի կախավորում» ծրագիրը (կցվում է):


2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2011 թվականի ապրիլի 12-ին կնքված N ՀՀ-4-10/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կահույքի պատրաստում և տեղադրում՝ 1309200 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի

Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ց Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան



2011թ. ապրիլի 12

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու ինֆեկցիոն հակատուբերկուլյոզային հիվանդանոց» ՓԲԸ-ի մասնակի կահավորում

ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Մասամբ ապահովել ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու ինֆեկցիոն հակատուբերկուլյոզային հիվանդանոց» ՓԲԸ-ն անհրաժեշտ կահույքով
2.	Ծրագրի քարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը	ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, առողջապահության բնագավառ

2011/5/12

5.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 1.309.200,00 դրամ:
6.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու ինֆեկցիոն հակատուբերկուլյոզային հիվանդանոց» ՓԲԸ-ն
7.	Ծրագրի իրականացման տեղությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2011թ. ապրիլի 12-ից մինչև 2011թ. հուլիսի 12-ը:
8.	Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում
9.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՀԱՏԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ-4-10/11 Պայմանագրի Հավելված թիվ 1-ի համաձայն գույքի պատրաստում, զննում եւ անհատույց հանձնում՝ 1.309.200,00 դրամ առանց ԱԱՀ-ի:
10.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
11.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ՀՀ Առողջապահության նախարարության հետ:
12.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության քարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

2011/5/12



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
22 ապրիլի 2011 թվականի N Մ - 281 - Ա
քաղ. երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑ-
ՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԳՅՈՒՂԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՅՈՒՂՏԵՆՆԻԿԱՅԻ ՆԵՐՄՈՒ-
ԾՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի 20-ի N 3/3.8-1/77798-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի ապրիլի 19-ի N 01/2273-11, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2011 թվականի ապրիլի 15-ի N ՍԿ/04.1/1798-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի ապրիլի 14-ի N ԱԱ/3-4/2219-11 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2011 թվականի ապրիլի 21-ի N 01/21.1/1532-11 եզրակացությունները, **ո թ ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 25365380 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի համար գյուղատնտեսական ներմուծում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԳԱԼՈՊԵՐ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00069233) 2011 թվականի հունվարի 26-ին կնքված N ԳՏ-01/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է միջնորդության վարձավճար՝ 2468281 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի, և ապրանքի փոխադրման արժեքը մաքսային կետից մինչև քաղաք Իջևան՝ 500000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի ֆինանսավորմամբ ձեռք բերված գյուղատնտեսական ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում՝

1) շարքացան-խոտհնձիչ BM12, 1 տեղ, 700 կգ ընդհանուր քաշով, 3000 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման և այլ ծախսերը կազմում են 1697 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՍՄ.


2) տրակտոր «Բելառուս-320.4» (2 հատ) և կոլտիվատոր, 3 տեղ, 3357 կգ ընդհանուր քաշով, 736545 ռուսական ռուբլի արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 172942 ռուսական ռուբլի, ՄՃՓ ՍՄ.

3) գոլթան PLN-3-35P, 6 տեղ, 450 կգ ընդհանուր քաշով, 1212.70 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 818 ԱՄՆ-ի դոլար, ՄՃՓ ՍՄ.

4) տրակտոր «Բելառուս-82.1», 13 տեղ, 4165 կգ ընդհանուր քաշով, 455510 ռուսական ռուբլի արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 214958 ռուսական ռուբլի, ՄՃՓ ՍՄ.:

4. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

5. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն



«20» ապրիլի 2011թ.

**«ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի համար գյուղտեխնիկայի ներմուծում»
ԾՐԱԳԻՐ**

1. Ծրագրի նպատակը	ՀՀ Տավուշի մարզի գյուղատնտեսության զարգացմանը նպաստելու նպատակով ներմուծել և «Հիմնատավուշ» նորաստեղծ բարեգործական հիմնադրամին անհատույց հանձնել գյուղտեխնիկա, որը կտրամադրվի սահմանամերձ գյուղերի համայնքներին անվճար հիմունքներով:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններից
3. Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կոտայարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
4. Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը	ՀՀ Տավուշի մարզ, սահմանամերձ 14 գյուղեր, գյուղատնտեսության բնագավառ

մ. 5/3

5. Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է՝ 25.365.380,00 ՀՀ դրամ
6. Բարեգործություն ստացողը	Ալնադբյուր, Այգեհովիտ, Խաչքառակ, Լուսահովիտ, Լուսածոր, Գետահովիտ, Դիտավան, Սարիգյուղ, Կայան, Բերքաբեր, Ներքին Ծաղկավան, Կայան, Վազաշեն, Ազատամուտ սահմանամերձ գյուղերի համայնքները
7. Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2011թ հունվարի 26-ից մինչև 2011թ.հունիսի 26-ը:
8. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում
9. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	<p>«GALOPER» ՍՊԸ-ի կողմից գյուղտեխնիկայի ձեռքբերում և փոխադրում մինչև Բագրատաշենի մագսակետ՝</p> <ul style="list-style-type: none"> - շարքացան՝ 3.250,00 ԱՄՆ դոլարի համարժեք դրամ: Փոխադրման ծախսերը՝ 533.600,00 ՀՀ դրամ: (ակնկալում ենք մաքսային արտոնություններ) - «Բելարուս» տրակտոր և կուլտիվատոր՝ 736.545,00 Ռուսական ռուբլու համարժեք դրամ: Գուքան՝ 1.212,70 ԱՄՆ դոլարի համարժեք դրամ: «Բելարուս» տրակտոր՝ 455.510,00 Ռուսական ռուբլու համարժեք դրամ:

մ. 5/3



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՆԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**22 ապրիլի 2011 թվականի N Մ-282-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԲԺՇԿԱԿԵՆՍԱՔԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ
ԻՐԱՎԱՆԱՏՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՎԻ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԵԹՈՂԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾՐԱԳՐԻ
ՄԱՍԻՆ**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի 1-ի N 3/3.8-1/77026-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի ապրիլի 5-ի N 01/1980-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի ապրիլի 4-ի N ՀՔ/22/2577-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի ապրիլի 18-ի N 03/07-1/3777-11, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության 2011 թվականի մարտի 31-ի N 7/02.3/577-11, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր ազգային անվտանգության ծառայության 2011 թվականի ապրիլի 4-ի N 11/184, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի 2011 թվականի մարտի 30-ի N 02-Մ-18 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի 28-ի N 3/3-6/1741-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական դրակել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Բժշկակենսաբանական միջազգային հետբուսական ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող 17000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ Գիտական համաժողովի և տարածաշրջանային գործնական մեթոդական դասընթացի կազմակերպման ծրագիրը (կցվում է):
2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Բժշկակենսաբանական միջազգային հետբուսական ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր ազգային անվտանգության ծառայություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆ ՄԵԹՈՂԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՍԱՆ ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Կազմակերպել գիտական համաժողով «Միկրոալիքների ոչ-թերմալ կենսաբանական ազդեցության մեխանիզմները և դոզիմետրիան» վերնագրով, որի իրականացման շրջանակներում նախատեսվում է անցկացնել տարածաշրջանային գործնական մեթոդական ուսուցման դասընթացներ:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ Կառավարության 2003թ. Հունվարի 16-ին N66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 3-րդ կետի «Բ» ենթակետով նախատեսվող հարկային և մաքսային արտոնությունների ստացում:
3.	Բարեգործը	1/ Տիեզերքի Ուսումնասիրման և Ջարգացման Եվրոպական Գրասենյակ (EUROPEAN OFFICE OF AEROSPACE RESEARCH AND DEVELOPMENT (EOARD), UNIT 4515 Box 14, APO AE 09421 USA, WENDY HARISON (FA 86 55-10-1-5039)), 2/ Օովային Ուսումնասիրման Գրասենյակի Նավատորմային Դեպարտամենտ (DEPARTAMENT OF THE NAVY Office of Naval Research Global (ONRG) 86 Blenheim Crescent Ruilip, MIDDX, HA4 7HB, UK (N6209-11-1-1018))
4.	Ծրագրի կատարողը	ՀՀ ԿԳՆ «Բժշկական-սարբանական միջազգային Ինտերնալ Կենտրոն» ՊՈԱԿ, Ավան, Աճառյան 31, ՀՎՀՀ 00008887
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ք. Երևան, գիտական բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է 17.000 ԱՄՆ դոլար, որից 7.000 ԱՄՆ դոլարը տրամադրվել է Տիեզերքի Ուսումնասիրման և Ջարգացման Եվրոպական Գրասենյակի (EOARD), իսկ 10.000 ԱՄՆ դոլարը՝ Օովային Ուսումնասիրման Գրասենյակի Նավատորմային Դեպարտամենտի (ONRG) կողմից
7.	Բարեգործություն ստացողը	Գիտական հանրություն
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	01/03/2011 – 01/12/2011
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների	Նախատեսվում է կազմակերպել գիտական համաժողով մայիս ամսին, որի ֆինանսական ծավալը կազմում է 10515 ԱՄՆ դոլար, որը կվերաբաշխվի ստորև բերված նպատակներով՝ ա/ հյուրանոցային ծախսեր, բ/ ճանապարհային ծախսեր, գ/ գիտաժողովի իրականացման վայրի վարձակալում:

ծավալը	Համաժողովի շրջանակներում կկազմակերպվի նաև երիտասարդ գիտնականների գործնական դասընթաց, որի նպատակով էլ նախատեսվում է իրականացնել բեռի ներմուծում՝ երկու խմբաբանակով: ա/ առաջին խմբաբանակի ֆինանսական ծավալը կազմում է 761,3 Եվրո, բ/ երկրորդ խմբաբանակի ֆինանսական ծավալը կազմում է 5411 ԱՄՆ դոլար:
10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1/ Բեռի առաջին խմբաբանակն իր մեջ ներառում է՝ ա/ Էրիթրոզին Բ - Erythrosin B, բ/ Ֆուրա-2-ԱՄ - Fura-2-AM, գ/ Օովաբոլի Պերօքսիդազ - Peroxidase from Horseradish: Առաջին խմբաբանակի ֆինանսական ծավալը կազմում է 761,3 Եվրո, 2/ երկրորդ խմբաբանակն իր մեջ ներառում է՝ ա/ Թիմիդին - Thymidine, [6-3H]- 5mCi (185MBq), բ/ Օուաբաին - Ouabain, [3H(G)]-, 1mCi (37MBq), գ/ Կալցիում-45 - Calcium-45 Radionuclide, 10mCi (370MBq): Երկրորդ խմբաբանակի ֆինանսական ծավալը կազմում է 5411 ԱՄՆ դոլար:
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցել ՀՀ Կրթության Գիտության Նախարարության, ՀՀ Կառավարության արևելք Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի և ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողովի հետ
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հաշվետվությունների ներկայացում Տիեզերքի Ուսումնասիրման և Ջարգացման Եվրոպական Գրասենյակին (EOARD), ինչպես նաև Օովային Ուսումնասիրման Գրասենյակի Նավատորմային Դեպարտամենտին (ONRG): Օրենքով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում՝ ՀՀ Կառավարության արևելք Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի և ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողովին:



20.5/11



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 ապրիլի 2011 թվականի N Մ-283-Ա
քաղ. երևան**


**«ՓՅՈՒՆԻԿ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ
ՍՏԱՑՎԱԾ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՆԵՐ-
ՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2011 թվականի ապրիլի 26-ի որոշման նախագծի համաձայնեցման թերթը, որ ո շ ու մ է.

1. Բարեգործական որակել անհատ բարերար Կաբրիել Ուհանեսի Ղենբերջիի միջոցով որպես օժանդակություն «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված շտապ օգնության ավտոմեքենայի (Volkswagen մակնիշի՝ 2005 թվականի արտադրության, նույնականացման համարը՝ WV2ZZZ7HZ4H012473, 9300 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 600 եվրո) ներմուծման ու անհատույց հանձնման ծրագիրը:

2. «Փյունիկ» բարեգործական հիմնադրամին՝ նշված ավտոմեքենայի հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ